

մանադրութեան Եկեղեցւոյ՝ ի Հերակլէ Հռոս-
մոց թագաւորէ, և ի Խոսրովայ Պարսից ար-
քայէ աւուրցն և այսր Եղիցի. իսկ ինչ որ
յառաջ քան զնոցա ժամանակն զործեցեալ էր,
մի շարժեցի, զի չպիտեմք ինչ հաստատուն,
թէ որպէս կալեալ բայց յայսմհետէ այսպէս
կալցին՝ որպէս սահմանեցաք յանուն Ցեան.
և մի ոք իշխեցէ փոխել զայս սահմանադր-
րութիւնս։

Սիսն Կաթուղիկոսն զըսումէ հենց կանոն-
ների սկզբում..... «ամենայն յամենայնէ մեզ
արժան է հասանել և քննել և տեսանել ըզ-
կարգ Եկեղեցւոյ, զոր կանոնեցին ս. Հարքն,
թէ որպէս ունիցին առաջնորդք կամ ժողո-
վուրդ Եկեղեցւոյ։ Վասն որպէս ես Ոիովն՝ որ
ոչ ըստ արժանեաց, այլ ըստ ողորմութեան
Աստուծոյ, եպիսկոպոսապետ Հայոց հոգ զայս
յանձին եղեալ, կուեցի զեպիսկոպոսակիցս իմ
ի հոգեկան հարկիս այսորիկ խորհուրդ՝ տնտե-
սել մեզ սպասաւորաց Բանին, զոր ընկալաք
յանձին հոգուել զժողովուրդ Ցեան՝ հաստա-
տել զաւանդեալ օրինադրութիւն ս. Հարցն։
իսէ զներին ըստ-լ Էտրեղալուսունեամէ է նոյն հա-
նուն միաբանելու...»

Դւնայ նոյն ժողովը շեշտումէ իւր կանոն-
ների վերջում։ «Արդ զայս Ժի. զլուխ, զոր
սահմանաւ եղաք՝ ոչ մտածածին ինչ՝ այլ ըստ
հրամանէ Հոգուցն Սրբոյն, և ըստ սահմանէ որբոց
Հորցնե Գրիգորի, և բարեպաշտ թագաւորին
Տրդատայ. և նորին Ս. Գրիգորի Լուսաւորչի
զաւակացն» Սոյնպէս և Յովհան Իմաս-
տասէրն է զրում։ «մեղ իրեւ հայրասիրաց ո-
մանց որդուց՝ զառ ի նոցանէ (ի ս. Հարանց
նախնեաց) անտես մնացեալն, ձեռն տալով
Աստուծոյ, տեսանել արժան է, և ի բարեկար-
գութիւն և ի բարեզարդութիւն ածել։»¹

Արջապէս կոստանդին Ա. Կաթուղիկոսը
զըսումէ իւր կոնդակի սկզբներում. «Հրաման է
այս առաքելացիր, որ ի տարւոջն երեք ան-
գամ առաջնորդք Եկեղեցւոյ ժողովով տեսա-
նեն զկարգս Եկեղեցւոյ, թէ ո՞րէս ո՞նցն

շատակներն յառեկուականն՝ զի՞ Հոգին Առողջ հաս-
տարակեաց, զարական լեռու և զէկամուռ որո՞ն
իւնի ...»

(Ըարունակելի)

Ա. Տէր. ՄԻՔԵԼԵԱՆ.

ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԿԱՅԻՆԻ ՊԱՏԱՍԽՈԱՆԸ

(ԲԵՐՍԻԵՒՑ)



(Ըարունակութիւն *)

Հայ եղբայրներ, ինչ տ-
րաւ քրիստոնէութիւ-
նը մարմնական չար-
չարանքները թեթե-
ացնելու համար։ Բայց
ինչպէս մենք արդէն
տեսանք, որա մէջ մեր
առաքելութեան մի մասն է միայն պարու-
նակուում։ Բայցի մարմինը կայ և անմահ հոգի։
Եթէ մենք պարտաւոր ենք մեր մերձաւոր-
ների ժամանակաւոր շահերին համակրու-
թեամբ վերաբերուել, ինչպէս կարող ենք
սառնասիրա, անտարբեր գտնուել երբ գոր-
ծը վերաբերուումէ նրանց հոգուն, այսինքն
այն բանին որ նրանց մէջ յափենական է
և ամենամթանկագին։ Ես այս բողէիս յիշե-
ցի այն յարգանքի մասին, որ Աւետարանը
տածումէր զէպի բոլորովին աղքատներն ու
ամենամթշուանները։ Բայց, նախ և առաջ
ինչի՞ վերայ է հիմնուում այս յարգանքը։
Այն հաւատի վիրայ, որ ամենադառն աղ-
քատներն էլ, ամենասատոր աստիճանի վերայ
գտնուածներն էլ, անմահի հոգի ունին.
ստեղծուած են ըստ պատկերի Աստուծոյ,
հրաւիրուած են զէպի յափենական երա-
նութիւնը, և որոնց՝ իւր արիւնով փրկելու

համբք աշխարհ եկաւ Յիսուս Քրիստոսը: Եւ այսպէս, այն հիման վերայ որ ես հաւատում եմ այս հոգուն, ստրուկներից կամ չեթանոսներից վերջինը իրաւունք ունի իմ յարգանքին արժանանալ: Քանզակագործի նման որ անձեւ հողակաշտի մէջ նախապէս պատկերացնումէ նազելիութեամբ և վաեմութեամբ լի այն կերպարանքը, որից քանդակագործի գրիչը նրան պէտք է ստեղծագործի, ձուլողի նման որ կղկղանքի հետ խառնուած, խառնափնդոր, ալանդակ հալոցի մէջ տեսնումէ փայլութիւն, զրանց նման և ես ամենավայրենից գարշելի եղեռնագործ մարդու մէջ կարող եմ նշնարել և նախապէս ողջունել վերանորոգեալ հոգուն, որ ընդունակ կարող է լինել Աստուածային պատկեր ստեղծագործել: Ես գիտեմ, որ արդ տեսակ մարդու հոգին մի տեսակ աւերակների է նմանում: Բայց այս աւերակները սրբավայրի աւերակներ են, որ Տէրը շուտով կարող է վերականգնել և իւր անձառելի ներկայութեամբ լցնել: Խղցէք ինձանից այդ հաւատը և մարդու ինձ համար ոչ այլ ինչ կլինի, եթէ ոչ մի արարած որ աշխարհ է եկել մի բոլէս մի թուանշան աշխարհին գումարի մէջ, մի անիւ՝ աշխարհին մեխանիզմի մէջ: Եթէ ես հաւատում եմ նիւթին միայն, ինձ ինչ գործ զարգացնել մարդոյ մէջ աւելի վաերմ աւելի բարձր բընութիւն, որ այն անբաղդ պայմանների տակ որի մէջ նա գտնուում է, երբէք չէ կարող երեան գալ այս աշխարհում: Առաւել լու է թողնել նրան բաղդի հաճոյքին: Առաւել լու է կայինի նման ասել. «Միթէ պահապան իցեմ եղբօրն իմայ»:

Բայց եթէ միանգամես հասկացաց ինչ բան է իմ հոգին, եթէ մի անգամ զգացի, որ նա իմ մեծութիւնն ու արժանաւորութիւնն է և որ իսկապէս նրա մէջ է պարունակուում իմ ճշմարիտ կեանքը, ոչ այն ժամանակ ինչ ցամանակ ինձ ցանկալի է նոյն կեանքը զարթեցնել և ուրիշի մէջ: Այս ժամանակից ես ձգաւումն կզգամ դէպի մեր եղբայրները և

կցանկամ մօտենալ նրանց հետ վոխագարձ օգնութեան և համակրանաց համար: Եւ այսպէս, եղբայրներ, մենք պարտականութիւն ունենք հոգու վերաբերմամբ: և այս այն պատճառաւ որ մենք գնահատել գիտենք մարգկային հոգին: Աւելացնում եմ և այն՝ որ այս մասին կրկնակի է մեր պարտականութիւնը: մեզ յայտնի է թէ մեղքը որ առիման ստորացրել է հոգուն:

Մենք խօսեցինք մարմնաւոր չարչարանքների մասին, բայց միթէ հոգին պական ենթարկուած է նրանց: Հոգին, չէ կրում արգեօք աւելի խորին, աւելի սարստիելի չարչարանքներ, որովհետեւ նրանք կարող են յափառենական չարչարանքներ լինել: «Այսեցէք ձեր շուրջը. ո՞րք ան հոգիներ կան, որ չեն ձանաշում Աստուծոյն, չեն ընդունում մինչեւ անգամ հայհոյումնեն նրան: Ո՞րքան հոգիներ կան, որ գնում են զեզիսութեան և մնափառութեան կորստական ձանապարհով: Ո՞րքան հոգիներ կան, որ միշտ առաւել և առաւել խորշում — հեռանում են Աստուծոյին հաղորդակցութիւնից և խորթացնում են իրանց Աստուծային կեանքից: մի խօսքով ո՞րքան կորստեան մասնուած հոգիներ կան: Դուք այս բոլորը գիտէք եղբայրներ: Եւ ահա հենց այս հոգիները պէտք է փրկել:

Փրկել հոգիքը. հենց որս համար և աշխարհ եկաւ Քրիստոս: Նա տեսաւ կորստեան մատնուած այս հոգիքը և իւր Աստուծային տեսութեամբ չափեց անդունդի խորութիւնը, որի մէջ նրանք ընկղմուած էին, և որպէս զի կարողանար նրանց այնաեղից գուրս հանել ամենայն ինչ նուիրեց. և իւր սիրու, և իւր արիւնը և իւր կեանքը: Բայց միթէ սէր գէպի հոգիքը աղբիւրի նման չէր բղիսում նրա խաչի պատուանգանի տակ: Այսեցէք Պօղոս առաքեալի վերայ: Երբ նու այս սիրով համակուած է, մնացած ամենայն ինչ ոչնանում: Նոեմանումէ նրա կեանքում նրա սիրով գտաւ իւր համար ամենաբարձրը սիրոյ կապը — սիրոյ կապ գէպի նա՝ որ մեզ համար մարտիրոսուեց: Նա պէտք է գնա

անխոնչ աշխատելու, ամենատեսակ զրկանք ներ, նեղութիւններ կրելու։ Մէկ եկեղեցին արդէն հիմնուած է։ բայց նա նրան թողնումէ մի ուրիշը հիմնելու Անտիոքից յետոյ Դաղատիայումն է հիմնում եկեղեցի։ այնուհետև Եվեսոսում Մակեդոնիայում Հռոմաւմ և վերջապէս Խապանիայում Գիշերը մինչև անգամ տեսիլները նրան հանգրատութիւն չեն տալիս։ Առաքեալը կարծես լսումէ ձայնիր որոնք առումնն նրան։ «Եկ մեզ մօտ և օգնիր» (գործ, մշ. 9)։ Եւ խղճի ձայնը այս հրաւէրին անողորմ ողժով պատասխանումէ, «վայ է քեզ՝ եթէ չես գնալ քարոզելու»։

Ուշ գէպի հոգիք, եկեղեցին ապրելով Խրուսուցի կեանքով, զգումէ այս ոչըրը ներշնչուած է նրանով։ և աչա բնջու ժամանակից աշխարհը ունի մի գործ, որ անյայտ էր հին գարերում։ գործ որ յատուի է մի միայն քրիստոնէութեան։ Աս քարոզչութիւնն է։ Ո՞չ, ես գիտեմ։ որպիսի յարձակմունքների ենթարկուեցաւ առաքելութիւնները։ Բայց ի վերայ այսր ամենայնին եղայրների ձեզ ծանօթ են արգեօք, մի ուրիշ աւելի բարձր, աւելի վսիմ բան։ քան այս գաղտնածածուկ կապերը, որոնք ստիպում են մեզ հետաքրքրուել թէ ինչ է կատարուում այն մարդկանց մօտ։ որոնք ապրում են աշխարհի միւս ծայրում։ և աղօթել այն հոգիների համար, որոնք հաղարաւոր մղններ հեռի են մեզանից։ Փիլիսոփայութիւնը կամ մինչև անգամ մարդասիրութիւնը (Փալաւրոնիա) ե՞րբ են առաջացրել այս վսիմ առաքելութեան նման մի բան։ Միմիայն քրիստոնէութիւնը կարող էր յարուցանել այսպիսի երեսյներ։ Մի այլ թեթեւամիտը ծաղրումէ, մտածելով թէ որպիսի անգըթութիւններով Նւրուպան յայտնի արաւ իրան հեթանոսական աշխարհին, ծանօթացնելով վայրենիներին զէնքի, շոայլութեան և սորկական ծառացութեան հետ։ Ի վերայ այսր ամենայնի յաղթողների մէջ, որ աւելի անգութ էին, քան իրանց զոհերը, մշտա-

պէս գտնուում էին անձնազոհ անհատներ առաւել ջերմ հայեացքներով վայրենիների վերայ։ Նրանք ուղեորուում էին այս հեթանունների մօտ և պատմում նրանց որ երկլնքում կայ Հայր, որ նրանց սիրումէ և երկրի վերայ կան եղայրները որոնք ցանկանում են նրանց աղատել պատմում էին նրանց Աստուծոյ Որդւոյ հրաշալի պատմութիւնը, որ մարդացաւ, և հեթանունների սրտում հաւատ էին ներշնչում ի Քրիստոս։ Այս քարոզիչներին հալածում ծաղրում ոպանում են։ բայց նրանց շարքերը Քրիստոսի այլ զինուորներով են լցուում։ և նրանց արիւնով ուողած հոգի վերայ, շուտով սկիզբն են առնում։ ինչպէս առաքելոց ժամանակը եկեղեցիներ, որտեղ նաև այժմ հաղարաւոր հոգիներ մեղանից առաջ են ընթանում Աստուծութիւնը մէջ իրանց սիրով և ջերմեռանդութեամբ գէպի Քրիստոս։ Եւ այսպէս, Աւետարանի թելք, որ դեռ ոչ այնքան վաղ տասն և երկու ձկնորսները անցկացրին Գաղիւեացից, շուտով կմիացնի բոլոր ծայրերը, պարփակելով իւր մէջ ամբողջ աշխարհը։

Բայց փրկել հոգիքը միմիայն ուրիշ տեղերում և աշխարհներում չպէտք է լինի։ Զգոյշ լինենք որպէս զի միմիայն լոկ երեւկայութեամբ չյափշտակութիւնք այս մեծ։ վըսեմ ձեռնարկութիւնների մասին, որոնց մեծագործութիւնը հիացումն է պատճառում խրաքանչիւր մեծահոգիքի սրտի։ Այն հոգիքը որոնք ձեր հոգացողութեան են յանձնուած, ձեզանից շատ մօտ են գտնուում եղայրներ, նրանք ձեր ընտանիքումն են։ ձեր ըրնակարանում։ ձեր օջաղում մեր փողոցներում։ ճանապարհների անցքերում։ Աչա՝ ամենից առաջ այստեղ պէտք է կեանք և լոյս ներս թափանցել։ Եւ ճշմարիտ, ի՞նչ բանի կարող է ծառայել, աշխարհ—աշխարհ թափանց քրիստոնէական կրօնին գարձնելու առաջին պատահողին, եթէ մեր զոների մօտ վերերով ծածկուած Դաղարն է պարկած կամ

մի հոգի՝ որ զուրկ է ամենափրկիչ արդարութիւնից: Լառ է ունենալ այնքան սէր, որ ամրող աշխարհը ընդգրկել կարողանացինք բայց թոյլ տուէք այս սիրոյ առաջին առարկաները լինեն նրանք, որոնց Աստուած պարգևել է մեզ և որոնք շրջապատռումեն մեզ:

Ահա, եղբայրներ, մեր առարխութիւնը իւր բոլոր ծաւալով նիշ ձեւով և սահմանափակէի նրան, մեղանչած կիմնէի ճշմարտութեան դէմ: Այժմ նայենք ինչ չափով ենք կատարում այս պարտականութիւնը՝ խրախուսել և փրկել մերձաւորին:

Մենք չենք խօսել նրանց մասին, որոնք երբէք չեն կատարում նրան մնալով եկեղեցու ծոցում չոր ու ցամաք սրտով, հսական զըր գիտներով և միմիայն անձնական վիճակին կարգաւորութեան մասին հոգսերով: Ինչպէս են կատարում նրան, նրանք՝ որոնք խօստովանութեն այս պատուիրանի անհրաժեշտութիւնը:

*Միթէ պահապան իցեմ եղբօրն իմոյ: Մենք կարծես չենք համարձակուում պարզապէս արտասանել այս խօսքերը. բայց միթէ մտածել չենք համարձակուում: Միթէ այս խօսքերը ամենից առաւել լաւ չէին արտադրյալել այն զգացմունքը, որ զգում ենք, երբ խորապես կերպով նայում ենք այն պարտականութեան վերայ, որ մեզ վերայ Տէրն է զրել: Եւ եթէ եռականութիւնը այժմ թոյլ չէ տալիս այս խօսքերը ձեր բերանից գուրս թուցնել արդեօք գուք չէք արտասանել նրանց երբ և իցէ վհասութեան աղդեցութեան տակ: Եւ ահա՝ ի ներկայութեան այս պարտականութեան մենք պարտուու ենք հեղութեամբ մտաքերել Տիրով խօսքերը «Արթուն կացէք և աղօթու արարէք՝ զի մի անկանիցիք ի փորձութիւն: հոգիս յօժար է՝ բայց մարմինս տկար» (Վատթ. 19. 41): Հոգիս յօժար է: Եւ ճշմարիս ով մեղանից հոգեկան յուզմունքներով չէ համակռւել ի ներկայութեան այս բարձր պարտականութեան որ Տէր Աստուածը մեզ է տունդում Մեղանից ով չէ զգացել որ այս

կերպ հառկացած կեանքը, ճշմարիտ կեանք է: Յայց վայրկենական ժամանակից յետոյ, երբ երես առ երես կյացանուէք ձեր պարտականութեան հետ և երբ հարկաւոր կիմնի չյափշտակուել այլ գործել, այն ժամանակ մարմինը տկար կիմնից կատեք նոյնպէս, որ խնդիրը վսեմէ և նրա վիթխարի մեծութիւնը ձեզ երկիւղ է ազգում: Վինումնեն բոպէներ, երբ մեր կատարելիք գործերի մասին մոածմունքները, մեզ հալածումն պաշտում: կատարելապէս ուժասպառ են անում: Վինումնեն բոպէներ, որ մենք լսում ենք ինչպէս մեր հոգու խորքերում բարձրանութէ մթին և համբ աղմուկը, որ քանի գնում՝ առաւել և առաւել սասականութէ: Սա՛ երկրային վշտերի աղմուկներն են: Հարբատահարուածների հեծկլատանքները, քաղցածների գառնապէտ գանդատները, անբաւականների տրտունջները, կամ այն հոգիների չարագուշակ ուրախութիւնը, որոնք կորստեան են մատնուում: Այս բոլոր ձայները միախառնուած բարձրանութեն, մրրկալից մակնթացութեան ժամանակ աշուելի քամիներից բարձրացրած ալիքների նման, և թոշում հասնում են մեզ նրանց յուսահատկան, որտաճմիկ հեծկլատանքները:

Այն ժամանակ խոնարհելով այս մթին անգունդի վերայ, մենք ասում ենք. «Ի՞նչ բանի կարող է ծառայել իմ թոյլ, անզօր խօսքը, որ գձում եմ այս խառնափնդորութեան մէջ. ինչու համար մանրացնեմ իմ հացը այս ահազին ովկիանոսի մակերեւոյթի վերայ: »

Դուք որ ծանօթ էք այս փորձութիւններին, գուք որ զիտէք, այս գառնապէտ բոպէներում որպիսի ուժով յուսահատութիւնը պատում: Ներս է սահում մեր սրտի մէջ, լսեցէք, ես ինչ կասեմ ձեզ բոլորիդ. «Խորապնին կերպով նոյեցէք Քրիստոսի վերայ»: Դուք ուժասպառ էք լինում ձեր խնդրի մեծութիւնից, որովհեաւ գուք մի քանի հոգիներ պէտք է փրկէք, մի քանի չարչարանքները թեթեացնէք: Խակ Փրկիչը որ ամրող մարդկութիւնը պէտք է փրկէք, ի՞նչպէս կատարեց այդ:

Փրկիցը առանց ընդդիմախօսութեան կատարումէր Նոր կամքը և իւր գործը տեսնումէր իւրաքանչիւր պարտականութեանց մէջ, որոնք ամեն բռպէ հանգիպումէին Նրա ճանապարհի վերայ: Նրա գործը մարդկութիւնը փրկելու մէջ էր կայանում: Այս, բայց Աստուծոյն հաճելի էր որ այս ամենամեծ գործը սկսուեր Գոլիեայի աննշան գաւառում և որ այս առատ հնձի սկզբնաւորութիւնը լինէին մի քանի աղքատ ձկնորսներ: Եւ Յիսուսը հաւատարիմէ մնում այս խնդրին ամենաքարտակ մանրամանութեամբ, հաւատարիմէ մնում իւրաքանչիւր հօգու, որ Նրան է յանձնում Հայրը. ամեն վշտերի որ Նրա համար ուղարկուումէ: Հրաշալի՛ օրինակ, ովկ կարող էր ասել, որ յատկապէս այնտեղ, մի անյայտ ցեղի մէջ, մի կորուեալց յետ ընկած երկում պատրաստուում է բոլոր մարդկութեան համար փրկութիւն: Ահա իսկապէս, այսպէս և կատարեց Քրիստոսը իւր գործը: Նա, Որի սիրութ բաւականացափ լայնածաւալ է մեր բոլոր վշտերին համազգած լինելու, Նա, Որը զգում է իւր մէջ բաւականացափ մէր ամրադ մարդկութիւնը փրկելու, Նախ և առաջ բժշկում: Փրկումէ Նրանց, որոնք Նրան շրջապատում են: Ոչ ոք Նրանցից, Նրա ուշագրութիւնից չէ վրիպում: անարժան չէ համարուում և երկրի վերայ ամենափոքրիկների համար անգամ Նա չէ խնայում իւր հրաշալի իսրատական զրոյցներն ու վարդապետութիւնները:

Գնանք Յիսուսի հետքով՝ գործենք ինչպէս և Նա, այն համեստ ասպարիզում: որտեղ Նախախնամութիւնը մեզ գրել է: Ընդունենք ամենայն գործ, որ Նա ուղարկումէ մեզ համար, միսիթարենք ամեն վիշտ, որ Նա զընումէ մեր ճանապարհի վերայ: և զբաղուած լինելով այս ստոյգ և մշտական աշխատանքով, յուսահասութիւնը երբեք մեզ կորցնելու մի անդամէլ ձեզ ասել. «Խորազննին կերպով նայեցէք Քրիստոսի վերայ»: Բայց Յիսուս Քրիստոսը եղբայրներ, արգեօք չնորհակալութիւն նկատեց իւր այնափ բարերարութիւնների համար, նկատեց արգեօք սրտեր, որ փափկանային Նրա սիրալիր խօսքերից և Նրանց համապատասխան հաւատ գոնէ այն հրաշքների վերաբերմամբ, որ Նա գործումէր: Ճաղավարզը որին Նա կերակ-

թող աշխատի միջոց տալ թշուառ, աշխատաւոր մարդկանց ու կանանց գոյութիւնը շարունակել, երբորդը վերջապէս թող հոգատար լինի որբերի ախուր վիճակը թեթեազնել, որոնք ընդունուած են յանուն Յիսուսի... Այս գործը անվերջ բազմադան է. բայց նա չէ հարկադրաւմ ցած թաղնել այն ձեռքերը, որ հետամնաւ է լինում Նրան կատարել Յիսուսի ոգութիւնը, որովհետեւ ամեն մարդ գիտէ որ ոչինչ ջանք ի զուր չէ անհետանում և յօդուտ մերձաւորի տուած ոչ մի գրօշ երբէք չէ կորչում:

Բայց ես լսումեմ: Կորպայրներ, ձեր վերջին հականառութիւնը: Այս, զուք կատէք մենք պատրաստ կլինէինք գործել ամենահամեստ ասպարիզում: գործել արիարար բայց մի պայմանով միայն, որ մեր աշխատանքը գոնէ որ և է պտուղ տար: Բայց մեր աշխատանքը անդպատճեր է լինում: մենք տեսանք, ինչպէս մեր ջանքերը ջարդ ու փրշուր եղան յամառ անտարբերութեան և սիրտ պատառող անշնորհակալութեան հանդիօլով: Արան, եղբայրներ, յաջորդումէ մեզ իսունարհեցնող անկաջնող լինութեանց, յուսահատութեանց ընդունացն փորձերի տխուր պատմութիւնը, որ իւրաքանչիւր քրիստոնեայ անկատած գիտէ և կարող է իւր հեթում նկարագրել ձեզ ամենապերճախօս լիզուով: ամենապայծառ գոյներով:

Այս բոլոր հականառութիւնների այս բոլոր շարժառիթ պատճառների համար կորցնել արիութիւնը և գէն շպրտել գործը, թոյլ արուեկ ինձ ձեր գէմ գնել այն մի և նոյն պատասխանը, որ այս բուգիս գուք լոեցիք. թոյլ տուէք մի անդամէլ ձեզ ասել. «Խորազննին կերպով նայեցէք Քրիստոսի վերայ»: Բայց Յիսուս Քրիստոսը եղբայրներ, արգեօք չնորհակալութիւն նկատեց իւր այնափ բարերարութիւնների համար, նկատեց արգեօք սրտեր, որ փափկանային Նրա սիրալիր խօսքերից և Նրանց համապատասխան հաւատ գոնէ այն հրաշքների վերաբերմամբ, որ Նա գործումէր: Ճաղավարզը որին

րեց, արդեօք պաշտպանեց վուանգի ժամանակ, և ցոյց տուեց պատշաճաւոր համակրութիւն, արամազրութիւն։ Միթէ նրան հաւասարիմ մնացին առաքեալները որոնց նա ուսուցանում էր, որոնց շրջապատեց ամենաքնքոյց հօգատարութեամբ։ Աւաղ, փոքրոգութեամբ նրանք վախան, ցիր ու ցան եղան և խառնուեցան թշնամիների խուժանի հետ։ Որպան աշագին տարերութիւն նրա գործած բարերարութիւնների և նրանց հետեանքների մէջ։ Երեք տարի սրտեաւանդն զրոյցներ, երեք տարի սուրբ, անբիծ կեանք, երեք տարի անչամեմատ սէր և հօգացողութիւններ մարդկանց ֆիզիքական և բարոյական բարուքման համար։ Ի՞նչ են նշանակում բոլոր միւս ծառայութիւնները որանց առաջ։ Նրանք գունատուում խաւարում են նրանց առաջ, ինչպէս ամենապայծառ աստղերը արեգակի առաջ։ Եւ այս բոլոր արտասովոր երևոյթները խաչի պատուանդանի մօտ ժողովեցին ոչ աւելի քան երկու, երեք կանայք, որոնք աչ ու գողով հեկեկում էին նրան ծաղրող ամբոխի առաջ։

Աքեալ հոգիներ, որ հառաջում էք ձեր անյաջողութիւնից, ի՞նչ կասէիք դուք այն ժամանակ խաչի պատուանդանի մօտ։ Դուք կարո՞ղ էիք արդեօք գուշակել որ այս խաչը յաղթութիւն է և որ կամ օրեր, երբ ամբողջ աշխարհի ժողովութիւնները կթափուին երկրութագելու նրա պատուանդանի մօտ։

Ահա Աստուածային անօրէնութիւնը, ահա Հրէից այն գայթակղութիւնը և հեթանոսաց յիմորութիւնը, որի մասին վկայում է Պօղոս առաքեալը։ Յաղթել արգելքների մէջ, յաղթել ստորութեան մէջ, յաղթել իւր կամտոր մահուամբ։ ահա Յիսուսի յաղթութիւնը։

Նա՝ գուցէ և կլինի ձերը շատ հաւանական է որ և ձեզ չյաջողուի տեսնել ձեր գործունէութեան արգասիքը։ Դուք նոյնպէս գուցէ կցանէք արտասուքների մէջ, դուք ևս հրաւէր կկարգով հոգիների, որոնք ձեղ չեն պատասխանել։ դուք նոյնպէս կրաժա-

նէք ձեր ողորմութիւնը անշնորհակալ ապերախտ աղքատներին, ձեր ամենասուրբ նըսպատակները կծաղրեն։ ձեր սէրը, գուցէ կարհամարհէն, Բայց այս մռայլ բոպէներում երբ վհատութիւնը կցանկայ ներս թափանցել ձեր հօգու խորքերը, որ նրանից դուրս հրաւիրի եղբայրասպանի խօսքերը։ «Միթէ պահապան իցեմ եղբօրն իմոյ»։ այդ բոպէներում պատկերացրէք Յիսուսին և նայելով նրա անսահման սիրոյն, արտասովոր համբերութեանը, գթասրտութեանը որ երկրային ամենատեսակ չարիքներից շատ բարձր է կանգնած։ Նրա մօտ և դուք կդըտնէք ոյժ՝ սիրել ներգործել և փառաւորել մինչեւ այն օրը, երբ Տէր Աստուածը ձեղ կասի, «Եկայք օրհնեալք Հօր իմայ ժառանգեցէք զպատրաստեալ ձեղ զարքայութիւնն ի սկզբանէ աշխարհի» (Մատթ. Խ. 34)։

Ոչ եղբայրներ, չէ որ չենք յոգնիլ եթէ գնանք այս ճանապարհով, որ մեզ համար թանկագին է։ Եթէ մենք մոռանայինք մեր խեղճ, տառապեալ և յանցաւոր եղբայրներին, եթէ մենք դադարէինք հոգալ այն մասին որ նրանց բարձրացնենք, փրկենք, մենք պէտք է հաօկանանք որ աշխարհի վերայ կայ խաւարի, մոլութեան և պատրանքների ընդարձակ և գաղտնածածուկ եռանդուն քարոզութիւն։ Այս քարոզութիւնը ոչ մի բոպէ չէ նուազում։ Նա, որին Ա. Գիրը անուանում է «Խշան աշխարհիս այսորիկ», (Յով. Ճ. 31) նոյնպէս ունի զօրք և իւր քարոզիչներն։ Նրանք շրջում են առանց կանգնելու, հրաւէր կարգալով ամեն մարդոյ, ամենուրեք լսելի է նրանց ձայնը։ Նըրանք խօսում գրում որոնում են իրանց համար աշխակերտներ և հետեղներ։ «Հետեղիր ինձ»։ ասում է խեղճ երիտասարդին զուարձասէր մարգը կամ պժգալի պատուասէրը, որ անցնում է նրա առաջելից, գոհ, հպարտ իւր հարստութեամբ և աշխարհում բռնած դիբքով և երիտասարդը հետեւում է պատուասէրին, հրապուրուած հարստութեան և բարեվայելութեան փայլով և հո-

զին ծախումէ աշխարհի համար, որ գեռ ևս երէկ աղնիւ և վերին աստիճանի դպայուն էր գէպի ամենատեսակ բարի գործ: «Հետեւ իր ինձ» ասում է անբարպական համարակաց կինը խեղճ, ողորմելի մշակուհուն անցնելով նրա առաջեցից ազմկալի ուրախութեամբ և պճնազարդութեամբ: Հետեւ իր ինձ գոնէ մի օր, և թշուառը հետեւումէ նրան: Նա ոտք է գնում այն կեանքի մէջ որ լի է անպարկեշտութեամբ և նախատինքով և այս կեանքին է նուիրում մօր արտասուքներով սրբագործուած հոգին: Հոգի որի համար այնչափ անմուռնջ աղօթքներ: Չերմազին բարեմաղթութիւններ վեր բարձրացան դէպի երկինքը:

«Հետեւ իր ինձ» ասում է անհաւատ մարդը երիտասարդ սերունդին, խօսքով, գրչով սերմանելով ամեն ինչ աւերող—քանդող վարդապետութիւնը: «Հետեւ իր ինձ», որովհետեւ ինձ համար ամենալաւ հնազանդութիւնը բանականութեան հնազանդութիւնն է և ամենաբարձր փառքը՝ մտաւորական: Աւաղը քան մարդիկ հետեւումեն նրան: Ո՞քան մարդիկ հրճուանքով, ուրախ ծափահարութեամբ գնում են մզկիցնաբար յայտարարելու, աղքատութիւնից և տանջանքներից կատազած բոլոր սրտերին, որ երկինքը ունայն բան է, որ Աստուած չէ ընդունում մեր աղօթքները և որ սչնչութիւնը ամեն բանի վախճանն է: «Հետեւ իր ինձ»: Ահա այն բացականչութիւնը, որով նրանք դառնում են բոլորին, քանի գեռ ևս լայն ճանապարհով ցած են իշխում: Բաւական չէ որ իրանք կորած են, հարկաւոր է գեռ ուրիշներին էլ կորցնել:

Ի վերայ այսօր ամենայնի, Դու նրանց սպասում էիր ո՞վ Յիսուս, նրանց համար նոյնակ, սչարչարուեցիր և Քո արիւնաշաղախ խաչի բարձրութիւնից նրանց բոլորին ասացիր, «Եկացք առ իս»: Բայց տեսան արդեօք այս խաչը, եղբայրներ: Նրանք արդեօք նանուժում են նրան, որին մենք անուանում ենք Փրկիչ: Խոկ մենք ի՞նչ որել հոգիներին

Նրա կողմը գրաւելու համար: Տէր, զարթեցրու մեր խիղճը աղասիր մեզ մեր անտարբերութիւնից անհոգութիւնից և անձնական բարեվայելութեան սիրուց, բացավառիր մեր սրտերը, ներշնչիր մեր մէջ՝ մեծամեծ զոհաբերութեանց ջերմ ցանկութիւն, և թոյլ տուր մեզ ցոյց տալ աշխարհին, որ Քո գործը շարունակուումէ և որ ամենաբարձր յաղթութիւնը ապահոված է հաւատուի և բարի գործերով յօդուտ մերձաւորի:

Թարգմ: ԽՈԲԵՆ ՔԱՀ, ԽԱՌՋԱԳԻՆԵԱՆՑ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՓՐԵՕԲԵԼԻ

ԿՐԹԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ,
ԸՆԹԱԶԱԲԱՆ.

(Եպրունակութիւն) *.



Բէօբէլի կրթական եղանակը աղնուացնումէ, երիխայի ձգութեանը և զարգացնումէ նրա ընդունակութիւնները ըսկըսած նրա առաջին տարուց:

Կրթութեան այս նոր եղանակը, որ մենք ներկայացնում ենք և առաջարկում ենք նրա հիմնական զարախաններն ուսումնասիրելու և իրագործելու՝ կարելի է անուանել մի եղանակ՝ որ լաւ է մշակուած: Չէ կարելի ասել թէ՝ աւելացնելու բան չի մնում և գործադրելու համար չէ կարելի փոփոխութիւնների ենթարկել: Մյոյն եղանակը հետաքրքիր է ամեն մարդու համար, որ զրազուելու է երեխայի հետ նրա ծնուելու օրից սկսած և ստիպուած է կատարել ծանր պարտաւորութիւններ մի է-

* Ցև նախընթաց համարում: